



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3348

Այսպետական
և առողջապահութեան
ընդԵրքական Ա. Գևհարովին կանոն

491.99-8
F-23

Դար- Հայիսկան Ա.
1886

Հայոց աշխարհ պատճեն Տէս.
19. 1886. Տէ. Տա 3 13089
14844

ԱՅԲԵՆԱՐԱՆ

եւ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ԲՈՎՈՐԴԻՔԵՆՑԻ

ՀՈՐ ՆԱԽԻԳԵՒԱՆԻ ԲԱՌԱՐՈՒՆ

Ա Ե Ր Ա Դ Ե Յ

Խ. Ա Ռ Ո Վ Ե Լ Ա Ս Ե Կ

Տպագրիալ Տափառ Թեմական Դպրանոցի Նոր Նախիջևանի
և Բեսարաբիայ Վիճակին.



277

ՀՈՐ ՆԱԽԻԳԵՒԱՆ

Տպարան Ակրագեկի Յարութիւնեան

1886

491.99-8
P-23

2002

2010

Հ Արմ.
3-5099₂

Ա. Տ.

491.99-8

Բ - 23

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑԻ

ՆՈՐ ՆԵՐԻՎԵԼԵԿՆԵՐ ԲԱԺՄԱԴԻՆ

ՎԵՐԱՄԵՑ

Խ. ԱՌԱՋԻՆԱՌԵՆ

Տպագրեալ ծախիւք թեմական Գյուղանոցի Առ Կախ-
իչնեանի և Բեսսարաբիոյ Ա իմակին



ԱՆՎ. № 18568

ՆՈՐ ՆԵՐԻՎԵԼԵԿՆԵՐ

ՏՊԱՐԱՆ ՍԵՐԱՎԵԿԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

1886.


ՀԵՂԻԿՈՒԹԻՒՆ ՅԱՅԱԳ ԱԲՐԵՎ

1. Ընթենցանութեան մէքենական յաջողակութիւնը վարժում է այն նիւթի վերայ, որ աշակերտներին ոչ միայն ծանօթ է, այլ և սիրելի է դարձած : Ուսուցիչը այսաեղ հարկաւորութիւն չունի ժամանակ կորցնելու ընթերցածի բովանդակութիւնը բացատրելու համար :

2. Տարոյագիտութեան նիւթին մենք մեծ կրթող նշանակութիւն ենք տալիս, ինչպէս այդ կարելի է տեսնել մը ։ Ուզեցոյց հայ ուսուցչիւ աշխատութիւնից : Ուստի և ցանկալի էր, որ առաջին տարուայ մեծագոյն մասնը գործադրուէր դոցա վերայ, և ։ Առաջին Ընթերցարանը ։ տրուէր աշակերտների ձեռը միայն այն ժամանակ, երբ արդէն մշակուած է թէ բարոյագիտութեան նիւթը և թէ այբբենարանը : Այդ պատճառաւ և մենք կարծում ենք, որ նպատակայարմար կը լինէր դասերի թիւը տարուայ վերայ բաժանել մօտաւորապէս այսպէս : Շաբաթական դասերի թիւն է 24: Դպրոցական տարուայ սկզբից մինչև Փետրարարի 15-ը բաքցագիտութիւնից նշանակում է 18 ժամ, թուարանութիւնից 3 ժամ (6 կէս ժամ), կարգալ և գրելու նախավարժութիւններից (գծագրութիւն, վերլուծութիւն, իսկ յետոյ այբբենարան) 3 ժամ (6 կէս ժամ): Փետրուարի 15-ից մինչև դպրոցական տարուայ վերջը երեսաները գլխաւորապէս զբաղւում են կարգալով ։ Առաջին Ընթերցարանիւ նիւթը : Այդ ժամանակամիջոցում ընթերցանութեան վարժութեանց հետ զուգընթաց յառաջ են գնում և ուղղագրութեան վարժութիւնները :

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 27 Июня 1886 г.

44943 ահ



29513 - 67

3. թռուաբանութիւնից մենք բաւական ենք համարում՝
առաջին տարուայ համար 1—10։ Հակառակ դիպուածում,
ուր հարկը պահանջում է դուրս գալ այդ սահմանից, այնտեղ
,,Առաջին ընթերցարանիւ։ Ա մասնը հարկաւոր է թողնել
երկրորդ տարուան, որով և ձեռն կը բերուի բաւականաչափ
ժամանակ թռուաբանութեան համար։

4. Վելրդ չենք համարում այստեղ յայտնել մեր խորին
շնորհակալութիւնը Դէորդ Դոգոխեանցին, նորա մի քանի
ոտանաւորների համար, որոնք և մենք մեծ ուրախութեամբ
ընդունեցինք մեր,,Առաջին ընթերցարանիւ մէջ։ Դոքա են
ՀՀ 10, 30, 34, 40, 42, 43, 55 և 59։ Սոցա արտասպութեան
իրաւունքը վերապահուած է։ Անզ իբրև աղբիւր ծառայել
են նաև Պատկանեանի գրուածները, որի անունը երաշխաւոր
է նիւթի գեղեցկութեան։

Ե. Խահանքեանց.

ՕՐԵՆՈՒԹՈՒՅԹԵԱՆՆ.

Վրաբատեան բառքառը հասկանալու համար տեղը ոյս
աղայոց կրած դժուարութիւնը, ընդ սմին և Կոր Կախ-
իջեանի թևմական Հոգեւոր Դպրանոցի Հոգաբարձու-
թեան այս դժուարաւթիւնը վերացնելու համար յայտնած
պահանջը, շարժառիթ եղան ինձ սոյն ընթերցարանը Կախ-
իջեանի բառբառին վերածելու։

Խ. Ուժմանսեան.

II.

Էշ, խող, աչք, շուն, ծառ։

ծուխ, ծուռ, ծուծ, ածու, առու, անուն,
ածուխ, ախոռ։

կ ո վ.

ծակ, խակ, ծով, զով, կառք, կանաչ, կա-
նուխ, կոկոն։

ճիւղ.

իւղ, շիւղ, աղ, խաղ, կող, ճաշ, ճանճ, քա-
ղաք, վէճ, ծուղակ։

ց ու լ.

ուլ, խուլ, խուց, կալ, ցախ, լաց, ցած,
ցանկ, ցանք, ցող, Ցոլակ։

Մուկը .

մաճ, մաղ, մաշ, մաշկ, մոմ, մոշ, ծոմ, մէկ,
մամուռ, մածուն, մանուկ, նամակ, նուռը,
ակը :

Մուկը կը կըրծէ :

Ծառը կանաչէ : Մանուկ :

Լուսին .

սոխ, սալ, սիւն, ցից, ուս, միւս, միս, ինքը,
ինը, մասը, սունկը, սառը, սամի, չամիչ,
ելիկ, կացին :

Լուսինը կը շողայ :

Խոզը կը խանչէ :

Մովսէս, Մինաս, Մամիկոն, Խաչիկ, Խոռ :

թիթեռ .

Թութ, թուխ, թուզ, թուշ, մութ, թակ,
կաթ, թաթ, թոկ, կոթ, թել, սեռը, լեռը,
ցեխ, կեռ, թոռը :

Թիթեռը կը թոչէ :

Նուռը թըթու է :

Թովմաս, Թաթիկ, Թոռնիկ :

արջ .

Եւր, ուր, ջուր, թուր, սուր, մուրճ,
չոր, ծոր, նոր, կար, կարճ, ճար, խար,
ջանք, ջերմ, քաջ, ունջ, մունջ, քար, ջորի,
ջութակ, արիւն, ականջ :

Արջը ունի մեծ մեծ թաթեր :

Շունը կը հաջէ :

Արամ, Արշակ, Աննա, Աշխէն, Արմենակ,
Առաքել, Արսէն, Թորոս, Խոսրով, Խորէն :

տափան .

Փուշ, նուշ, շուն, տուն, փոկ, փող, փոր,
փակ, ուղտ, արտ, կուտ, սուտ, տափակ,
կատու, տուփ, տետրակ, փետուր :

Տափանով կը տափեն հերկած գետինը :

Կովը կուտէ խոտ ու խար :

Տիրան, Տաճատ, Տիրիթ, Փառնակ, Փառոխ:

Հ ա ւ .

կաւ, լաւ, ցաւ, սեւ, արեւ, տերեւ, կեղեւ,
աւեւ, ծարաւ, կաքաւ, հեշտ, հաց, հում,
հով, հող, հովիւ, հիւսըն:

Աղաւնին կը մնչէ :

Հաւը կը կռկռայ :

Հացը կեփեն ալիւրէ :

Հեթում, Հեղինէ, Հըռիփսիմէ, Համազասպ,
Շուշան, Շողակաթ, Շաւարչ, Շըմաւոն,
Աւետիք :

Կ ա պ ի կ .

պատ, կապ, պանիր, կապերտ, տափակ,
պարապ, պառաւ, պաստառ, շապիկ, պատ-
կեր, քամի, քեռի, տապակ :

Կապիկը կը պարէ :

Տապակում միս կը տապկեն :

Կարապետ, Կիւրեղ, Կիրակոս Կամսար, Կո-
րիւն, Պետրոս, Պապ, Պերճ :

Ա ա գ .

գոմ, գող, գիւղ, գիծ, գիրք, հինգ, հոգս,
գառը, գարի, ագի, հոգի, գագաթը, գա-
զար, գազան, գետ, գետին, գինի, գիշեր,
գըլուկի :

Գութանով կը հերկեն գետինը :

Գինին կը շինեն խաղողէն :

Մագը կը լողայ լճի մէջ :

Մաթենիկ, Մարգիս, Միսակ, Մուրէն, Մու-
քիս, Մոփիս, Գագիկ, Գեղամ, Գիւտ,
Գարեգին, Գալուստ, Աւագ, Տիգրան,
Թագուհի :

Ճ ի .

Ճու, ճեւ, ճախ, ճագ, ճար, ճէթ, ճոր, ճիւն,
ճող, սանձ, տանձ, գանձ, հընձան, ճեռը,
ճաւար, հունձ :

Ճուկը կըլողայ գետի մէջ :

Ջին կուտէ գարի ու վարսակ :

Վրտերը կը հնձեն մանդաղով :

Փիլիպոս, Փառանձեմ, Փառնաւազ, Ղազար,
Ղուկաս, Ղեւոնդ :

բ ա ժ ա կ .

բակ, բալ, բարձ, բողկ, ուժ, կուժ, ժամ,
ժանդ, բուն, բուք, բուռը, բերան, լորիս,
կաղամբ, կաքաւ :

Բաղարջ կասեն անխմոր հացին :

Բահով կը փորեն գետինը :

Բաժակով ջուր կը խմեն :

Բազրատ, Բարսեղ, Բարիկ, Բարկէն, Բար,
Նահապետ, Ներսէհ, Ներսէս, Համբարձում:

ս ա ր դ .

Բադ, վարդ, բուրդ, դաղձ, դառը, դաս, դեղ,
դեղձ, դատարկ, դարպաս, դիւրին :

Դարբինը կը կռէ ուռնով :

Դուրով կը ծակեն տախտակը :

Սարդը կը բռնէ ճանձ :

Դաւիթ, Դանիէլ, Մամբէ, Մեսրոպ, Տիգ-
րան, Տըրդատ, Նուարդ, Կարդոս :

օ ձ .

օր, օդ, օղ, օղի, մօտ, խօսք, դօտի, տրօր,
կօշիկ, օրօրոց, ցօղ :

Օդանցքով կանցնէ օդը :

Օձը մի թիւնաւոր սողուն է :

Վարդան, Վահան, Վասակ, Վարսէն, Վար-
սէնիկ, Վազգէն, Վարդգէս, Պօղոս :

Փ ուր գ ո ն :

—————
II.

ո չ ի ս ա ր .

որ, որբ, որս, որթ, որջ, ողջ, ոստ, ոսկոր,
որկոր, որքան, որդի, որդ, ոտք, ոլեռ, ողնի,
ոսկի, ոչինչ, ոչ ոք :

Ոչխարը կուտայ կաթ :

Ամպերը կորոտան :

Ոսպը կուտեն պասին :

Թատէոս, Թէոդոս, Գէորգ, Ոսկան, Թէո-
դորոս, Ոուրէն, Ոոստոմ, Ոաքէլ :

Ե կ ե ղ ե ց ի .

Երկու, երեք, եօթը, եղ, երես, երկար, եթէ,
եւ, երկինք, երբ, երգ, երէկ, երկաթ, եղջիւր,
երազ :

Եկեղեցւոյ մէջ աղօթք կանեն :

Ես արդէն կարդալ գիտեմ :

Եղիշէ, Եփրէմ, Եզնիկ, Երուանդ, Եղիշա-
ղար, Եղիսաբէթ, Արշակ Տիգրանեանց, Ար-
սէն Արամեան, Վարդան Մամիկոնեան :

Հ Ա Պ Թ Ա Յ .

Ճառայ, փեսայ, կաթսայ, հիմայ, տղայ, ըն-
ծայ, ամառուայ տաքը, ձըմեռուայ ցուրտը,
վաղուայ գործերը, այսօրուայ ամպերը, երէ-
կուայ անձրեւը : Ես եկայ, ես իմացայ, ես
հասկըցայ, ես ուրախացայ, ես ուշացայ, ես
մուացայ : Նա կուտայ, նա կուգայ, նա կը
մընայ, նա կիմանայ, նա կը կարդայ, նա կը
հասկանայ, նա կուշանայ : Եթէ նա գայ, եթէ
նա գընայ, եթէ նա լաւանայ, եթէ նա իմանայ :

Այսօրուայ գործըդ վաղուան մի ձըգիր :
Շըդթան ունի շատ օղակներ :

Աս, դա, նա, սորագիրը, դորատետրը, նորա
մատիտը : Ասա՛, արա՛, կարդա՛, գընա՛, մընա՛:
Շուշանիկ, Շողակաթ, Արայ, Զարէհ, Հը-
րաչեայ, Նոյ :

յ ո պ ո պ .

յարդ, յարկ, յատակ, յօժար, յարմար, յե-
տոյ, յետին, յանկարծ, յիմար :

Յոպոպը կը կանչէ յոպ յոպ :

Յունապը մի պտուղ է :

Յակոբ, Յովսէփ, Յիսուս, Յովակիմ, Յա-
ռութիւն, Յուսիկ, Յովհաննէս :

Գ Ա Յ Լ .

Հայ, վայ, այ, էյ, չայ, թէյ, այլ, սայլ,
քայլ, այծ, կայծ, այր, ծայր, հայր, մայր,
այն, լայն, ձայն, երկայն, այս, այդ, այգի,
այժըմ, փայտ :

Գայլը մի վայրենի գազան է :

Հայը հայերէն կը խօսի :

Հայկ, Հայկակ, Նորայր, Զարմայր :

Ո Կ Ո Յ Կ :

Բոյս, յոյս, լոյս, բոյթ, ձըկոյթ մատը, գոյն,
կոյր, ոյժ, ծոյլ, թոյլ, մի զոյգ գուլպայ,
նոյն, ողջոյն :

Ողկոյզ կասեն խաղողի կուզին:
Ընկոյզը ունի կակալ, փեճեկ ու միջուկ:
Քերովքէ, Քըրիստոս:

III.

Աղդ, բարձ, բողկ, գիրք, գործ, գինձ,
թամբ, թանկ, կարթ, կարճ, կոշտ, հաստ, հեշտ,
ճանձ, մարդ, ներկ, պարզ, պինդ, տանձ:

Յանր, սանր, տետր, մանր, ցածր, տագր,
դուռն, ձեռն, նուռն, թիթեռն, լեռն, մուկն,
խառն, եղն, գառն, սառն, դառն, ուսումն,
թոռն, սեռն, հիւմն, որդն, ոտն, ոլեռն, կաթն,
կոճղ, շունս, խողդ, ծառս, կովդ, ցուլս:

Բարձր, դուստր, թանձր, գործ, հայրս,
մայրդ, գիրքս, գորգդ, սանրս, տետրդ,
տագրդ, բարձդ, ինքն, քաղցր, անգդ, աստդ:


Գլուխ, գրիչ, դմակ, խմոր, խմիչք,
բժիշկ, փլաւ, ծմակ, ծնողք, կծիկ, կռան,
կրակ, հրաման, հրեշտակ, ձմեռ, ձրագ,
մշակ, տղայ, թթու, Քրիստոս:

Գնդակ, բլթակ, հնձան, գրպան, դպրոց,
թմբուկ, թռչուն, խնձոր, ձկնիկ, խրճիթ,
մկրատ, կնձիթ, մրջիւն, նշխար, շղթայ,
նոնենի, պղտոր, ջնջոց, ջրհոր, Տրդատ:
Հաւը կը կըտցէ: Արտը կը հընձեն:

Ճոճոց, տղտղոց, մոմոց, բզրզոց,
կոկոց, զողոց, ճնճղուկ: Տղին մի՛ խտղտիր:
Գիրքդ մի՛ քրքրիր: Արջը կը մրթմրթայ:
Կա քիթին տակէն կը բորույ: Պառաւը
կը տքայ: Մեղուները կը թոշկոտին: Թի-
թեռները կը թոթուան: Հաւը կը կոկույ:
Ծիծեռնակը կ'երգէ:

Իժը օձ է: Լեռը սար է: Ցողը շաղ է:
Ֆուրդոնը սայլ է: Եշը կը գուայ: Ճանճը
կը թոշի: Օձը կը սողայ: Ծառը կանաչ է:
Զամիչը քաղցր է: Զուրը պաղ է: Ընկոյզը
կուտեն: Զին ունի բաշ: Ժամը քանի՞ է:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Արքոյ
ամէն:



295/3-67

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ.



ԱՌԱՋԻՆ ԲՆԹԵՐՑԱՐԱՆ

1. Տպաց և հաղորդ

Ես տղայ իմ:

Ես ունիմ հայր ու մայր:

Հայրս ու մայրս իմ ծնողքս են:

Ինձ կը կերակրեն իմ ծնողքս:

Նոքա ինձ կուտան զգեստներ ու կօշիկներ:

Նոքա ինձ անկողին կը պատրաստեն քուն
լինելու համար:

Իմ ծնողքս կը սիրեն ինձ:

Ես ալ կը սիրեմ իմ ծնողքս:

2. Երեսոց և ույը.

Ես ունիմ մէկ եղբայր և մէկ քոյր:

Իմ եղբօրս անունը Արմենակ է:

Իմ քրոջս անունը Վարսենիկ է:

Նոքա միշտ կը խաղան ինձ հետ:

Ես շատ կը սիրեմ եղբօրս ու քրոջս:

ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ՄԱՍ



3. Ի՞նչ է նև իսեւ.

Արօրով կը վարեն, տափանով կը տափեն:
Մանգաղով կը հնձեն, կամոնվ կը կամեն:
Դանակով կը կտրեն, սղոցով կը սղոցեն:
Դուրով կը փորեն, շաղափով կը շաղափեն:
Ուրագով կը տաշեն, կռանով երկաթ կը ծեծեն:
Ասեղով կը կարեն, գրիչով կը գրեն:

4. Ո՞ւ նև իսեւ.

Աքաղաղը կը կանչէ, հաւը կը կռկռայ:
Աղաւին կը մնչէ, էշը կը զռայ: Կովը կը
բառաչէ, կաքաւը կը կղկղայ: Արջը կը մըրթ-
մըրթայ, խոզը կը խանչէ: Կաչաղակը կը
կարկաչէ, ճնճղուկը կը ճռուռղէ: Զին կը
խրինջայ, արտուտը կը ծլւըլայ: Շունը կը
հաջէ, կատուն կը մլաւէ: Բգէզը կը բգզայ,
գառը կը մայէ: Տղան կուլայ, զանգակը կը
զնդզնդայ: Կօշիկը կը ճռճռայ, առիւծը կը
մռնչէ, քամին կը շառաչէ:

5. Ի՞նչն է և չնեւ.

Սեղանը կը շինեն փայտէ, կտաւը կը գոր-
ծեն կանեփէ: Կօշիկը կը կարեն կաշիէ, կա-

ցինը կը շինեն երկաթէ: Հացը կեփեն ա-
լիւրէ, ապուրը կեփեն մսէ: Կարագը կը
հարեն կաթէ, ձրագը կը թափեն ճարպէ:

6. Գոյնեւ.

Զիւնը սպիտակ է: Ածուխը սև է: Մո-
խիրը գորշ է: Շագանակը թուխ է: Ուկին
դեղին է: Արտը կանաչ է: Երկինքը կա-
պոյտ է: Արիւնը կարմիր է:

Կաթը սպիտակ է: Թանաքը սև է: Ամ-
պերը գորշ են: Դեղձանիկը դեղին է: Խոտը
կանաչ է: Մանուշակը կապոյտ է: Վարդը
կարմիր է:

7. Եւեգակ.

Արեգակը բոլորակ է: Նա կը փայլի ոս-
կիի պէս: Արեգակէն կը ծագեն շատ ճա-
ռագայթներ: Արեգակը առաւտուն կը ծագի,
իրիկունը մայր կը մտնէ: Երբ արեգակը կը
ծագի, օրը կը լուսանայ, ցերեկ կը դառնայ:
Երբ արեւը մայր կը մտնի, օրը կը մթնի ու
գիշեր կը լինի: Արեգակին ծագելուն և մայր
մտնելուն ժամանակը երկնքի ամպերը դե-
ղին ու կարմիր գոյներով կը փայլին:

8. Ա յ է - .

Արեւ, արեւ, դուրս արի,
Քեղքերել ենք աչքի լոյս,
Քու բուրիկը լուսնինկան
Դերեց չամիչ մէկ աման,
Ամազ եկաւ մութ արաւ,
Չամիչն աչքերէս կորաւ,
Բաց երեսդ, արկանկ,
Մ'էկ բուռ չամիչ քեղ կուտանք...
Օ՛խ, արեւին խաբեցինք,
Ամպի տակին հանեցինք :

9. Ա բ ա ս - օ դ ր .

Արեգակը ծագել է : Օրը լուսացել է :
Թուչունները արդէն արթնցել են եւ կերգեն
ծառերու վերայ : Ես ալ քունէս կշտացել եմ,
ելնեմ, ի՞նչու պառկած եմ : Աեղանի վերայ
արդէն կ'եփի ինքնաեռը, շուտ անեմ, երեսս
լուանամ եւ շորերս հագնեմ, ապա թէ ոչ
դասերէս կ'ուշանամ :

10. Հ ա ն ե լ ո ւ կ .

Ա երը ծակ, վարը ծակ,
Մ'էջը ջուր ու կրակ:
Այս ի՞նչ է :

11. Գ է շ է ր .

Արեգակը մայր մտել է, մթնել է : Դուր-
սը ամեննեին ձայն չի լըսուիլ : Ուխարներն
ու կովերը արօտէն արդէն տուն դարձել են:
Թուչունները քնած են : Երկնքի վրրայ կե-
րևնան լուսինն ու աստղերը : Լուսինը լոյս
կուտայ, աստղերը կը ցոլան : Շուտով հար-
կաւոր է հանուիլ եւ պառկիլ ու քուն լինել :

12. Հ ա ն ե լ ո ւ կ .

Մ'էկ քոյր ունինք և մէկ եղբայր, Երեկոյին կը մեռնի .
Կոքա կապրին երկինքը . Ոխան կը նծայի երեկոյին,
Մին կը նծայի առաւօտուն, Առաւօտուն կը մեռնի :
Այս ի՞նչ է :

13. Ա ս ո ւ դ է ր .

Աստղերը կը նմանին մեծ մեծ կայծերու :
Նոցամէն մէկ քանին խիստ պայծառ կը փայ-
լին, մէկ քանին աղօտ լոյս կուտան : Աստ-
ղերը կը տեսնուին միայն այն ժամանակ, երբ
երկինքը ամպած չէ : Շատ գեղեցիկ տեսք
ունի աստղերով զարդարուած երկինքը : Ես
շատ կը սիրեմ գիշերները նայել նոցա վրրայ:
Այդ ժամանակ ես միտքս կը բերեմ բարե-

բար Աստծուն, որ ստեղծել է աստղերը եւ շարել երկնքի վըրայ: Մենք կարող չենք համրել աստղերը: Նոքա անթիւ են: Կան մարդիկ, որ կը ճանաչեն իւրաքանչիւր աստղը:

14. Ի՞՞ անկողնու.

Արդէն մութ է եւ ես յոգնած եմ: Երթամ պառկեմ անկողնիս մէջ: Անկողնի մէջ տաք է ու փափուկ: Երբ լոյսը բացուի, անկողնէս կելնեմ: Մենք պէտք չէ, որ երկար քուն լինինք: Հիւանդ մարդը ցերեկն ալ անկողնի մէջ պառկած պիտի մնայ: Պառկելներէս առաջ՝ պէտք է աղօթք անենք: Նոյնպէս ալ պիտի աղօթք անենք առաւօտուն տեղերէս ելլածներուս պէս:

15. Տեր-հայկան առջեն.

Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկացէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկի: Օհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Թաղ մեզ դպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկիս զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

Փառք և երկրպագութիւն ի բարձունս չօր և Որդոյ և Հոգւցն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

16. Հանելուկներ.

Յերեկը աղա,	Կը բռնեմ, բռոռովս մէկ,
Գիշերը ծառայ:	Բաց թողնեմ, տունովս մէկ:
Այս ի՞նչ է:	Այս ի՞նչ է:

17. Արարհի անշահները.

Ես ունիմ երկու աչք, երկու ականջ, երկու ձեռք, երկու ոտք եւ մէկ բերան: Աչքերովս կը տեսնեմ: Ականջներովս կը լսեմ: Զեռքերովս կը բռնեմ: Ոտքերովս կը քաշեմ: Բերանովս կը խօսիմ: Ով որ չի տեսնիլ, նա կոյր է: Ով որ չի լսիլ, նա խուլ է: Ով որ չի կրնալ շիտակ քալելու, նա կաղ է: Ով որ չի կրնալ խօսելու, նա համր է:

18. Հանելուկներ.

Աէկ ծառ կայ,	Կալին վերայ հինգ տալ,
Օսառին վըրայ մէկ կալ.	Ամէն տալին մէկ մէկ սալ:
Այս ի՞նչ է:	Այս ի՞նչ է:

Դամբուն աջ ու ձախ կողմը, Բայց չեն տեսնել մէկ մէկու: Կատած են երկու եղբայր,

Այս ի՞նչ է:

Մի կաթսայ ունինք կրա- Կորա մէջքիչ մըդմակ կայ ձգած :
կին վրան դրած , կը հալի կաթսան դմակը կը մնայ :
Այս ի՞նչ է :

Երկու սենեակ , մէկ սիւնակ :
Այս ի՞նչ է :

19. Օգեստներ.

Մենք զգեստներ կը հագնինք որ չմըր-
սինք : Ես ունիմ գտակ եւ բաճկոն , շապիկ
ու վարտիք , կօշիկ ու գուլպայ : Կիրակի օրը
մենք մեր նոր զգեստները կը հագնինք : Մեր
բաճկոնը գրպան ունի : Գրպաններուս մէջ կը
պահենք մեր թաշկինակը : Ո՞վ կը կարէ
զգեստներ : — Դերձակը : Ո՞վ կը մաշէ ու կը
պատուտէ զգեստներ : — Տղայք : Ո՞վ կը կար-
կատէ զգեստներ եւ կը բանէ գուլպաներ : —
Սիրելի մայրիկը :

20. Ո՞ւժ պարն դարձող պղան .

Մէկ փոքրիկ , հինգ տարեկան տղայ մէկ
անգամ ինքն իրեն ասաց . « Եհ , ալ չուզիմ
փոքրիկ մնալ . այժմ ես կարող եմ մեծ պա-
րոն դառնալ : Ասաց ու հագաւ հօր գտակը ,
ձեռքն առաւ նորա փայտը եւ մինչև կէս

մէջքը գտակին մէջը թաղուած փողոց ելաւ :
Ով որ կը տեսնէր այդ փոքրիկ պարոնին ,
կանգ կառնէր , վրան կը նայէր եւ ծիծաղե-
լով կասէր . « Եհ , դու պարոն գտակ , ո՞ւր
կը տանիս այդ տղին » :

21. Ուուելէնէր.

Ես կուտիմ հաց ու գաթա , կաթ ու պա-
նիր , ապուր ու փլաւ , միս ու ձու , լոբիա
ու մաշ , սիսեռ ու բակլայ եւ շատ ուրիշ
բաներ : Հացը կը թխեն ալիւրէ : Ալիւրը
կը շինեն ցորենէ : Ցորենը կը բսնի արտե-
րու մէջ : Ջրաղացը կ'աղայ ցորենը եւ կը
շինէ ալիւր : Ալիւրէն կը շինեն խմոր , խմո-
րէն՝ հաց : Բայց ո՞վ կուտայ մեզ կաթ ու
միս : Կան մարդիկ , որ ո՛չ հաց ունին , ո՛չ
ալ միս : Նոքա աղքատ են :

22. Ճ ա յ.

Մենք ամիսը մի անգամ հաց կեփինք :
Խմորհունձողը երեկոյին կուգայ , տաշտի մէջ
ջուր , ալիւր , աղ ու խմորոց կը լցնէ ու կը
հունձէ , կը դառնայ խմոր : Խմորի վրան նա

Կը ծածկէ եւ կը թողնէ որ գայ: Լուսադէմին կուգայ հացթուխը, թոնիրը կը վառէ: Յետոյ խմորը կը գնդեն ու կը շարեն: Խմորչունձողը տրապեզին վրայ գրտնակով գունդերը կը բանայ եւ կուտայ հացթուխին: Սաբացը կը փռէ պատաժի վրայ եւ կը կպցնէ թոնրի կուշտին: Հացը թոնրէն նա կը հանէ հացահանով եւ կուտայ մօրս: Մայրս ալ հացերը կը փռէ, կը չորցընէ, կը ժողվէ եւ միմեանց վրայ կը շարէ, կը պահէ:

23. Մլաղաց և ջաղաց.

Ո՞ր տեղէն ալիւր կը ստանանք: Մլաղացը կ'աղայ իւր ջրաղացի մէջ: Ջրաղացի մէջ մէկ մեծ անիւր կայ, որ ջրով ման կուգայ: Անիւր կը պտտէ այն ծանր քարը, որ կը փշրէ ցորենը եւ ալիւր կը դարձնէ: Այդ ժամանակ երկանաքարը այնպիսի չխչխկոց կհանէ, որ մարդուս խօսածը հազիւ կը լսուի: Ալիւրի փոշին կը թուըտի եւ կը լեցնէ ջրաղացը: Այս պատճառով մլաղացը ոտքէն մինչև գլուխը սպիտակ ալիւրի փոշիով կը ծածկուի:

24. Հանելուկ.

Երկու քաղցած գաղան կան, Կոքա աշխարհք կը լափեն, Արք ձորի մէջ կ'մռմռան: Բայց և աշխարհք կը պահէն: Այս ի՞նչ է:

25. Պահանջ.

Զուրը կը լինի ջրհորի, աղբխարի, լճի ու գետի մէջ: Ջրհորէն ու աղբխարէն մենք խմելու ջուր կը ստանանք: Բայց արտերուն, բոյսերուն եւ ծառերուն ալ ջուր հարկաւոր է: Երկնքի ամպերը իրենց անձրեսով կը ջրեն նոցա: Մայրս ջուր կը բանեցնէ նաեւ մէկ բան եփելու եւ լուանալու համար: Զուրը ման կը բերէ նաեւ ջրաղացի անիւր: Ջրի մէջ կ'ապրին ձկներ, խեցգետիններ, գորտեր եւ շատ ուրիշ կենդանիներ: Սագերն ու բաղերը կը սիրեն ջրի մէջ լողաւ: Երբ նոքա ջրէն դուրս կենեն իրենց թեւերէն վար կը թափեն ջուրը: Աղբխարէն ջուր կը խմեն կովերը, ոչխարները, ձիները եւ դաշտի ու անտառի մէջ բնակող անասունները: Զմեռը ջուրը կը պաղի, սառոյց կը դառնայ:

26. Հանելուկներ.

Կը կտրեմ, կերկըննայ, Կը տաշեմ, կըլայննայ :
Այս ի՞նչ է :
Մէկ մը կայ, Ման կուգայ—ոտքեր չունի,
Որ կը խօսի—բերան չունի, Մարդասպան է—ոուր չունի :
Այս ի՞նչ է :

27. Անյօն .

Ենձրեւ, անձրեւ, ցած արի,
Բըսցուր ցորեն ու գարի,
Բըսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Եւլէ փոշի, մաքրէ օդ:
Ենձրեւ, անձրեւ ցած արի,
Գալըդ ամէնուս բարի :

28. Տղան սաւոյցի վեպ .

Չմեռ դեռ նոր սկսուել էր, ջուրը դեռ,
լաւ պաղած չէր : Այդ ժամանակ տղին մէկը
կանգնած էր մէկ լճի քով : Տղան նայեցաւ
նայեցաւ ու ասաց իւր մտքէն . «Արի եր-
թամ ու սառուցի վերայ փոքր ինչ խաղամ» :
Ասաց ու արաւ : Հազիւ թէ սահիլ սկսած
էր, սառոյցը ճաթեցաւ : Դրո՛մի . մեր տղան
մինչև վիզը թաղուցաւ լճի մէջ : Կա սկսաւ
աղաղակել . «Ո՞հ, օգնեցէք, թէ չէ ես կը

խղդուիմ» : Մէկ մարդ վրայ հասաւ, բռնեց
մազերէն եւ դուրս հանեց լճի մէջէն : Ոտ-
քէն մինչև գլուխը ջուրի ու ցեխի մէջ թա-
ղուած տուն գնաց : Հայրը բռնեց նորան եւ
մէկ աղէկ ծեծեց : Ի՞նչու :

29. Աւնեակ .

Մեր սենեակը ունի չորս պատ . մէկը ա-
ջակողմեան, միւսը ձախակողմեան, մէկը ա-
ռաջին, մէկն էլ ետեւի : Մէկ պատին վրայ
կը գտնուին լուսամուտներ, միւսին վրան
դուռ : Ամէն մէկ սենեակ կունենայ նաեւ մէկ
առաստաղ եւ մէկ յատակ : Առաստաղը սպի-
տակցուցած է, յատակը տախտակ գամած :
Սենեակի մէջ կայ մէկ վառարան, մէկ սե-
ղան, մէկ դարան, մէկ պահարան եւ շատ
աթոռներ : Վառարանը ձմեռը կը վառինք .
Սեղանի վերայ ճաշ եւ ընթրիք կուտենք,
կամ կը կարդանք ու կը գրենք : Դարանի
մէջ մեր սպիտակեղէնը կը պահենք, իսկ պա-
հարանին մէջ՝ մեր զգեստները : Ի՞նչ բանի
համար են աթոռներն ու հայելին : Սենեակը
մեզ կը պահպանէ անձրեէ, քամիէ եւ ցրտէ :

30. ՚Ն ՚Ր ՚Շ ՚Չ.

Դպրոցի մէջ բոլորովին ուրիշ կերպ է քան թէ մեր տունը : Դպրոցի մէջ աշակերտները կարգով նստած կը նային ուսուցչի վերայ : Ուսուցիչը կը պատմէ աշակերտներուն լաւ լաւ հեքետթներ : Նա նոցա հետ կը խօսի նաեւ անասուններու, թռչուններու, ծաղիկներու, երկնքի ու բարերար Աստուծոյ վրայ : Ուսուցիչը կը հարցնէ, աշակերտները կը պատասխանեն : Նոքա կը պատմեն, կը կարդան, կը գրեն, կը հաշուեն, կը գծագրեն ու կ'երգեն : Նոքա պիտի ուշագրութեամբ լսեն եւ ջանասէր լինին : Ատով նոքա կ'ուրախացնեն իրենց ծնողաց եւ ուսուցչին : Աստուծած կը սիրէ բարի եւ ջանասէր տղոց :

Թէև փոքրիկ եմ խաղասէր,
Պիտի լինիմ ես ջանասէր:
Զէ՞ որ մեղսն՝ փոքրիկ ինձմէն՝
Ո՞ղը կը ժողվէ ծաղիկներէն :

31. Բանջարանոց .

Մեր տան առջեւը մէկ բանջարանոց կայ : Բանջարանոցը ցանկով պատած է : Այնտեղ

կան փոքրիկ ակօսներ : Ակօսներուն մէջ կը ցանեն լախուլ, սոխ, բողկ, լորիա, բակլայ, մաշ, վարունգ ու ծաղիկներ : Բանջարանոցի մէջ կան նաեւ խոտ ու ծառեր :

32. Ա, Յ Ք Է .

Վար չկար մէկ ծերտնի կար : «Ես հիւանդացու եւ մեռնելին առաջ կանցց իրեն որդւոցը եւ ասաց . «Ակրելի որդիքա, իմ ունեցած չունեցածս այս տունն է եւ այս այգին : Ուրիշ բան չունիմ, որ ձեզ թողնեմ : Բայց այդ այգիին մէջ թաղուած գանձ կայ . փորեցէք, անշուշտ կը գանէք» :

Վորա մաշէն յետպ որդիքը սկսան փորփրել : Փորեցին, փորփրեցին, մէկ բան չգտան : Բայց հետեւեալ տարին այգին մեծ առատութեամբ խալող տուեց : Այն ժամանակ միայն հասկացոն նոքա, թէ ծերունին ինչ գանձի վերայ . խօսել էր : Ուստի այգիի գրան վրայ մեծ մեծ տառերով գրեցին . « Եշխատասիրութիւնը յիրաւի ոսկիի մէկ հանկը է » :

33. Ա Յ Հ Ա Ն Հ Ա Կ .

Մանուշակը գեղեցիկ, փոքրիկ ծաղիկ է : Նոքա գոյնը կապոյտ է, հոտը տնոյշ : Ո՞րտեղ կը բուսնի մանուշակը : Նա կը բուսնի թուփերու տակ, արօտներու մէջ : Հայկանուշը բանջարանոցին մէջ գտաւ մէկ փոքրիկ մանուշակ եւ բերեց իւր մօրը : Մայրը ու-

բախացաւ եւ համբուրեց իւր փոքրիկ, սիրուն Հայկանուշին։ Արմենակն ալ մի փունջ մանուշակ բերեց իւր ուսուցչին։ Ուսուցիչը շնորհակալութիւն արաւ եւ ասաց։ «Շատ ապրիս»։

34. Պատրիառագելեր.

Կապոյտ զիտով, կանաչ ոտքով,
Ես ծաղիկ եմ անուշ հոտով։
Թէւ տունկա փոքրիկ է ցած,
Արօտնելու մէջ միշտ պահուած,
Իսյց իմ փունջս ամենի տան —
Թէ աղքատի, թէ մեծատան —
Երբե գարնան առաջին զարդ,
Կմայ տեսնել ամեն մէկ մարդ։
Ես եմ սիրուն գարնան դուշակ,
Եմ անունս է մանուշակ։

35. Աւագանի.

Կեռասենին ունի գեղեցիկ, սպիտակ ծաղիկներ։ Ծաղիկներուն վերայ կը թուշին մեղուներ։ Մեղուները իրենց համար ծաղիկներէն մեղը կը ժողվեն։ Ծաղիկները թափուելէն յետոյ՝ կերևան կեռասեներ։ Նոքատաջ կանաչ կը լինին, վերջը կը կարմրին։ Ես շատ կը սիրեմ կեռաս, նա քաղցր համ

ունի։ Ճնճղուկներն ալ կը սիրեն կեռաս։ Նոքա կը թափին ծառերու վերայ եւ կուտեն։ Նոքա փոքրիկ գողեր են։

36. Չար Աւագանը.

Ո՞կ թռչուն բուն դրել եր Ա արդանենց պալախզի ծառերէն մէկուն վերայ։ Ա արդանը ուզեց տեսնել, թէ արդիօք բունին մէջը ի՞նչ կայ։ Կա ձանկոտուելով Ճիւղէ Ճիւղ բարձրացաւ։ Օչո, նա սկսաւ ծիծաղել։ Չեռքը երկնցուց որ առնէ։ Իսյց յանկարծ Ճիւղը կոտրեցաւ. դո՞մի — նա փուռեցաւ գետնի վերայ։

37. Ո՞ւ դու —.

Դուն մեղու տեսել ես։ Կա ինչի՞ կը նմանի։ Քանի՞ ուր ունի, բանի՞ թե։ Գիտե՞ս որ նա մէկ խայթոց ունի. ինչտեղ որ խայթէ, այնտեղը կ'ուռի։ Իսյց մեղուն մեղ կ'ուտայ նաև քաղցր մեղը։ Մեղը նա կը հաւաքէ ծաղիկներէն և կը տանի իւր փեթակը։

38. Հանկլուկ.

Ենջուր ջրաղաց, Ենկրակ բաղաբչ։
Ես ի՞նչ է։

39. Ո՞ւ դու —.

— Մեղու, ասա ինձ, դու է՞ր
Մեշտ կը թռչիս վար ու վեր։
— Ամեն օր և օրն ի բուն

Երս դաշտ ու ձոր կը թքոչեմ.
Չանք կը թափեմ ևս անվիրջ,
Մեղք փնտրելով ծաղկանց մէջ,
Եւ գտածա ևս շխտակ
Կը տանեմ շուտ իմ փեթակ:
Երբ որ փէց ցուրտ քամին,
Օռաղեկները թառամին,
Ես ձմեռը պաշարով
Լինիս իսպատ ապահով:

40. Շ ա ն չ .

— Ճանձիկ, ասա ինձ, դու է՞ր
Միշտ կը թռչիս վար ու վեր:
— Փոքրիկ ճանձ եմ զուարձասէր,
Միշտ կը թռչիմ վար ու վեր,
Թէ զով տան մէջ, թէ բակին
Սաստիկ արևին տաքին,
Կեր ու խումբն, խաղէն ջոկ
Խակի չունիմ ուրիշ հոգ:
Եւ ներկայով բաւական
Միտք չեմ բերեր ապագան:

41. Թ ա ն չ .

Թռչունը բուն կը շինէ: Բունի մէջ նս ձու կ'ածէ:
Զուն բոլորակ կը լինի: Մէկ բանի թռչուններու ձուն զա-
նազան գոյներով ներկած կը լինի: Թռչունը իւր ածած
ձուներուն վերայ թռչուս կը նստի և ճագեր կը հանէ: Զա-
գերը առաջ մերկ կը լինին: Յետոյ փոքր առ փոքր կը

թեաւորուին: Դուն տեսանձ ևս թռչունի բոյն: Դու ճա-
գերուն բունին մէջն չպիտի հանես: Մարին իւր ճագերը
այնպէս կը սիրէ, ինչպէս մայրը իւր փոքրիկ տղոցը:

42. Մ ա ն ո ւ կ և Ռ ա յ ո ւ ն .

— «Մանուկ, կը խնդրեմ, կ'աղացեմ ևս քեզ,
Հեռու, աշ հեռու, դու իմ բունիկէս.
Մէջը չի նայես, մանուկ սիրական,
Նորա մէջ փոքրիկ ճագեկներս կան:
Քեզի որ տեսնեն, կը սկսին կանչել
Միթէ դուն կուզես խեղճերուն տանջել»:
Մանուկը տեսնել բոյնը խիստ կուզեր,
Բայց հանդիսա մընաց աեզը, ի՞նչ անէր.
Երեկոյ եղաւ, եկաւ իւր բունը
Օռածկեց ճագերուն սիրուն թռչունը:
Գոռհ մնաց արդէն, որուն և ասաց.
«Դու ինձ գթացար, օրհնէ քեզ Աստուած»:

43. Ա ս տ ո ւ ա ծ .

Այն ո՞վ ուսոյց մրջեւնին
Գիտին փորփրել,
Բոլոր ամսու մէծ ջանքով
Պաշար հաւաքել:

Որմէ ուսաւ, ասեք ինձ,
Փոքրիկ թռչունը
Յարդէն, ճիւղէն և բըրդէն
Հիւսել իւր բունը:

Ո՞եղուին Խըրատ ո՞վ տուեց
Հրաշալի բանիւ

Օսպիկներէն մեզր ժողվել
Անուշ ու աղիւ :

Տէրն է դոցա ուսուցիւ
Բարի, անսահման :

Գանացէք միշտ կատարել
Նորա սուրբ հրաման :

44. Ռ' ն հ շ ո - է .

Ճ'նձղուկը մէկ փոքր թռչնիկ է : « Եսրա գլուխը փոքրիկ
է, կառուցը բարակ ու սուր, մարմինը մէկ ձուի չափ : Խւրա-
քանչխւր ոտքին վերայ ունի չըրա մատ : Ես մէկ ուրախ
թռչնիկ է, մէկտեղ հանդարա չի կանգնիլ : Միշտ մէկ Ճիւ-
ղէն միւս Ճիւղը, մէկ ծառէն մէկտըլ կը թռչըտի : Խւր
բունը կը շինէ պատերու ծակերուն մէջ կամ տանիքի տակ :
Ես կ ածէ գորշ բիծկրով թխագոյն ձու : **Ճ**'նձղուկը կ'ու-
տէ զանազան արմախը և կեռաս : Բայց նա շատ կը սիրէ
նաև միջատներ, սարդեր, ճանճեր ու թրթուլներ : « Ես
անդադար „Ճիւ, Ճիւ“ ձայն կը հանէ, կը ՃրւՃրւայ :

45. Ա ս գ ո - ։

Վակարանի մօտ պառկած է կատուն : « Ես այնտեղ
կը տաքնայ : « Ես ունի գեղեցիկ, կակուղ մազեր և մի
երկայն ընշացք : Եգին թաւամազ է ու վար կախուած :
Ոտքերու թաթերուն վերայ սուր սուր Ճիւաններ ունի :
Ես կը մոմուայ ու կը մշաւէ : Լսէ՞ ևս թէ նա ինչպէս

կը մշաւէ : Մի անգամ ես մեր կատուին բռնեցի, նա
ձեռքս Ճանկից : Կատուն միներ կը բռնէ և կուտէ : Բայց
նու երբեմն թռչուններ ալ կը բռնէ և կը սպանէ : Այդ
լու չի անիլ : Ես շատ գող ալ է : Մի անգամ մեր
ետրովածացուն գողացաւ ու կերաւ : Այս ալ վատ կանէ :
Բայց նա իրեն շատ մաքուր կը պահէ : Ես մաքրասէր է :

46. Փէսէ - Մէսէ .

Կատուն եկաւ վիսիկ-վիսիկ,
Հազար նազով ինչպէս հարսիկ,
Դունչը սրեեց թաթիկներով,
Մազը սանրից Ճիւաններով :
Կատու, կատու, է՞ր ևս տրտում,
Թէ՞ միներն են այսօր արթուն :

47. Մ' ո - է ը .

Մուկը փոքրիկ է : « Եսրա մորթը ողորկ է ու գեղեցիկ :
Դուն մուկ տեսի՞լ ես : « Եսրա գոյնը գորշ է : « Ես ունի
սուր գունչ : « Եսրա ոտքերը բարակ են ու կարճ, իսկ պոցը
երկայն : Ոտքերուն վրայ կայ հինգ մատ՝ սուր սուր եղունդ-
ներով : Ի՞նչ կուտէ մուկը : Հաց ու պանիր, միս ու ճարագ,
իւղ ու շաքար : Մուկը չափէ դուրս գող է : « Ես իւր
սուր ատամներով կը կրծէ յատակի տախտակները, պա-
հարանը և ներս կը մանէ : Ի՞նչ որ գտնէ, կը գողանայ և
կուտէ : Գնա՞ , կորի՞ր, փոքրիկ գող, գողերուն ոչ ոք չի
սիրեր : Մէկ անգամ մուկը եկաւ մօրս քովը և ասաց .
« Ակրելի մոյրիկ, քու իւղէդ փոքր ինչ սուր ինձ » : Այսրա

ասաց . — « Առ , պատիկ սաստանայ » : Մուկը առաւ և
իսկոյն փախաւ դնաց :

48. Աստուն և Շոնելը .

Մէկ որսկան շուն մէկ անգամ նապաստակ բռնեց և
բերեց տուն : Աստուն այդ տեսնելով նախառաց շունին՝
նորա անգթութեան համար : Այդ լոսկէին նոցա առաջը
մէկ հատ փոքրիկ մուկ գուրս ելաւ : Աստուն իսկոյն վրան
վաղեց , բռնեց ու կերտւ : Շոնը ասաց . « Այդ ի՞նչ
է բու արածդ : Դու ինձ կը նախատէիր , որ իս իմ տի-
րոջս համար մէկ նապաստակ բռնել էի , իսկ ինքդ այժմ
մուկն անուշ կանես » : — « Ե՛հ , իմ կերածս մէկ չնչին
մուկ է » , պատասխանեց կատուն :

Մեր կատուն իւր աչքի դերանը թողուցած , ուրիշի
աչքի շեւզը կ'որոնէ :

49. Ի՞ ո՞վ .

Գեղացին տան բակին մէջ աւելի շատ բան կայ տես-
նելու , բան քաղաքի աներուն բակին մէջը : « Աս վթապա-
տած է զանազան շինքերով : Բակին մէկ կողմը կը դանուին
գեղացին տունը , ձիկու ախոռը , կոմիրու ու եղներու
գոմը , ոչիսարներու փարախը , խոզանոյը , հաւնոյը և
թոնատունը : Միւս կողմը կայ մէկ շինք , մէկ մեծ դու-
ռով : Այդ գեղացին շտեմարանն է : Այստեղ նա կը պահէ
իւր ցորենը , դարին ու կորեկը , Բայց շատ զիւզերու մէջ
ցորենը կը պահէն ոչ թէ շտեմարաններու , այլ հորե-
րու մէջ :

50. Ա + ա զա զ .

Ահա աղբանոցի մէջ կանգնած է պքաղաղը : Տես , նա
ի՞նչ հպարտ հպարտ ման կուգայ : Կարծես մէկ մեծ
պարոն լինի : « Նա ունի կարմիր կատար և երկայն կարմիր
մօրուք : Կորա վեառուները զեղեցիկ են ու գոյնզգոյն :
Պոչը երկայն է և մանգաղի ձևով ծուած : Կորա ամէն
մէկ ոտքին վրայ մէկ մէկ երկայն բիտ կայ : Կորա իւրա-
քանչեւր ոտքին վերայ կայ չորս Ճիրանաւոր մատ , երեքը
առջևէն , մէկը ետևէն : Եղբ աքաղաղը հատիկ գտնէ , իս-
կան կը կանչէ իւր հաւերուն և նոցա կուտայ : Եղբ նոս
կշանայ , կը կանգնի մէկ բարձր տեղ և կը կանչէ կու-
կուրեկու : Աքաղաղը կը զարթի առաւօտուն կանուխն և
երկինքը կապուտկածին պէս իր անոյշ ձայնով կը խօսէ
մեծ մամային « Մէծ մամա , մէծ մամա , եւ տեղէդ —
ժաշկըթէ , տունըդ — տեղըդ ժողոտէ » :

51. Հանելուկ .

Բարձրանամ — սարէն ձայն տամ
Մեռած մարդուն — կենդանութիւն :
Այս ի՞նչ է :

52. Ա + ա զա զ .

Ի՞նչու աքլարը կանգնած բակի մէջ
Իւր կուկուրիկուն կը կանչէ անվերջ :
* * *
Ա ան զի վաղուց արևն է ծագել ,
Բայց դեռ ծոյլ տղան քունէն չէ զարթել ,

Տեղէն չէ ելեւ, աղօթք չէ արեւ,
Դպուցի դասը դեռ չէ սովորեւ:

* *

Խոր կուկուրիկուն աքլոլը կը կանչէ,
Տըղայոց պարտքը միտքերն կը ձգէ:

53. ։ ։ ։

Հաւը աքաղաղէն աւելի փոքր է: Կա չունի աքաղաղին պէս փայլուն թեւեր, մանգաղաձև ծռած պոչ ու բիտեր: Բայց նու հաւկիթ կածէ: Հաւկիթ ածելու ժամանակ նա կը կոկոայ և խմաց կուայ տանտիլինին: Հաւը թէւ աքաղաղէն փոքր է և նորս նման բիտեր չունի, բայց նորսամէն աւելի օգտակար է: Հաւը թուես կը նստի ու ձագեր կը հանէ: Կա լաւ մայրութիւն կանէ: Խոր ձագերուն զրօսնելու կը տանէ: Երբ որդեր ու հունգեր կը գտնէ, գուտգուտուլով կը կանչէ ձագերուն, կը մանցրընէ և կուտայ նոցա: Կա իւր թեւելուն տակ կը պահպանէ ձագերուն նաև անձրւէ և զիշատիչ թոշուններէ:

54. ։ ։ ։ ։ ։

Հաւկիթը կլոր ձեւ ունի: Կորա կճեպը Ճերմակ է ու շատ բարակ: Հաւկիթին մէջ կոյ սպիտակուց ու զեղչնուց: Դիկնուցը դեղին կը լինի, սպիտակուց՝ սպիտակ: Հաւկիթին կենին փոքրիկ ձագեր: Ույրս հաւկիթը կը հաւշէ, բայց նորսամէն կը պատրաստեն նաև ձուածեղ: Ուրն աւելի կը սիրես՝ խաշած հաւկիթ թէ ձուածեղ: Կա աւելի ձուածեղ կը սիրեմ:

55. Հանելուկ.

Փոքրիկ կարաս ունիմ Ճերմակ, Ուկջի ջուրը Երկու տեսակ:
Այս ի՞նչ է:

56. Բ ա դ.

Բաղը հաւեն մեծ է: Կա թէւ լաւ կը լողայ, բայց աղէկ քալեւ չի կրնաւ և պիեմէ բոլորովին չի կրնաւ թռչելու: Կա շատ ծանրաշարժ է: Կորա ոտքերը մաշկապատ ըլլալնուն համար լողալու խիստ յարմար են: Կորա մարմինը ծածկուած է խիստ փետուրներով: Այդ իսկ պատճառով փետուրներու մէջն ջուրը չի կրնար անցնել: Բնտանի բաղին բոււնն է՝ հաց, գարի, վարսակ, թիվ, խաշած գետնախնձոր և շատ ուրիշ բաներ: Վայրէնի բաղը ինքը կը գտնէ իւր կերակուրը: Կա կուտէ որդեր, խղոնջներ ու փոքրիկ ձիներ: Բաղը մեզ կուտայ փետուրներ և համեզ միս: Բաղի ձուն կեփեն, իսկ միուր կը տապակին կամ կը խղումըն: Կորա փետուրներէն ի՞նչ կանեն:

57. Բ ա դ է է.

— «Բաղիկ — բաղիկ,
Կարմիր թաթիկ,
Այդ ուր կեղթաս այգպէս կամաց .
Զագուկներդ չորս դիր առած» :

— Ես ուր կերթամ. ջուր գտնելը,
Զագուկներս լուանալու,
Լուանալու մաքուր — մաքուր,
Տղոց երեսն աղտ է ու մնուր:

58. Օվծեւնակ.

Օվծեւնակը մեծ ճարտարութեամբ իւր բունը կը շնէ: Պինդ ցեխի կտորները նա իւր լրանոնքով կը թրջէ և մէկը միւսին կը կացընէ: Բունին մէջ նա մազեր ու փետուրներ կը փուէ և խւր ձագելուն համար փափուկ օրօրոց կը շնէ: Չագուկները իրենց բերանը մեծ մեծ բաց կանին, երբ որձակը նոցա համար ձանձներ, մժղուկներ, մոծակներ և զանազան միջաններ բերէ: Դու ծիծեւնակին մնաս չի պիտի տաս: Նա շատ սիրուն թռչուն է և շատ լու ալ կերգէ: Երբ աշունը կուգայ, ծիծեւնակները կը պատրաստուին աւելի տաք երկիր թռչել երթալու: Հապա ի՞նչ թող անեն խեղճերը. ցուրտը վրաց կը հասնի և ուտելու բան չեն գտնիլ: Նոքա կը ժողովուին միասին, երամներ կը կազմեն և կը չունի դեպի տաք երկիրներ: Իսյց գաղնան նորա նորէն կը վլրագառնան:

59. Երժ Պանդիպէ.

Օվծեւնակ, ծիծեւնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա,
Ալ թռչես այդպէս արագ:

Ա՞ն, թոփ'ր, ծիծեւնակ,
Օնած աելս Աշտարակ,
Անդ շնի՞ր քո բունը
Հայրենի կտուրի տակ:
Անդ հեռու ալերոր
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իր որդուն
Ալ սպասէ օրէ ցօր:

Երբ տեսնես դու նորա,
Ինձմէն շատ բարեւ արա,
Ասա, թող նատի լսյ
Դու անբախտ որդու վերայ:

Դու պատմէ, թէ ի՞նչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով ողբալով,
Կեսնքս մաշուել եղել է կէս:

Ինձ համար ցերեկը
Մութ շրջէ արեգը,
Գիշերը թաց աշ քիս
Քունը մօտ չի գալիս:
Շուտով սառ հողի տակ
Ալ պառկիմ աստ մենակ,
Թաղնելով հօրա սրտում
Յաւալի միշտակի:

Դէ՛հ սիրուն ծիծեւնակ,
Հեռացի՛ր, գնաւ արագ,
Դէպ Հայր աշխարհը,
Օնած տեղս — Աշտարակ:

60. Ա շան ն ի.

Աղաւնիները շատ սիրուն թռչուններ են: Երբ նոքա տանիքի վերայ նատած կը լինին, կտուցներով իրենք իրենց կը մաքրեն, կը զարդարեն և ամէն մէկ փետուր կը յարդարեն: Այդ պատճառով նոքա խելօք տղոց պէս միշտ մաքուր կը լինին: Նոքա կապրին միասին զցդ զցդ: Խրաքանչիւր զցդն ունի իւր բունը: Մարին կածէ իւր

բունի մէջ երկու սպիտակ ձու, թուխս կը նստի և ձագ կը հանէ: Չագերը առաջ մերկ կը լինին և չեն կինալ տիղերէն շարժիլ: «Օճողները նոցա կը տաքցընեն ու կը սնուցանեն, մինչեւ որ թեւաւորուին, այնուհետև ձագերը կը թռչն և իրենց համար իրենք մնունդ կը ճարին:

61. ՄԵՂԱՆ և ԸՆԴՀԱՆԻ.

Մէկ անգամ մեղուին մէկը լիճը ընկաւ: Այդ բանը վերէն մէկ աղաւնի տեսաւ, որ ծառէն մէկ տերեւ կտրեց ու ձգեց լիճին մէջը: Մեղուն ճանկուառելով վեր ելաւ, նստաւ տերեւին վերաց: Երբ թեւերը չորցուց թռաւ գնաց իւր նստակէն:

Փոքր ինչ յետոց, երբ աղաւնին հանդիսաւ իւր տեղը նստած էր, որապոդին մէկը հրացանը ուղղեց աղաւնին որ զարնէ: Այդ իսկ միջոցին մեղուն կայծակի պէս վրայ հասաւ և այնպէս խոյժեց որսորդին, որ նա վեր ցաթկեցաւ: Գնդակը չի կատ աղաւնին, այլ բովէն անցաւ: Աղաւնին սրտին խորըէն մէծ շնորհակալութիւն յայտնելով մեղուին, թռաւ փախաւ այնաեղէն:

62. Ո ՀՅ Ա Յ.

Ոչխարի մարմինը հաստ է և ծածկուած կակուղ ու տաք բրդով: Առհասարակ նա սպիտակ կը լինի, բայց կան նաև սե ոչխարիներ: «Երցա ոտքերը բարակ են, ոտքերուն պՃեղները երկու կճղակ կունենան: Ոչխարները կճղակաւոր կենդանիներ են: Ամառը նոցա կը լուանան, յետոց կը խուզեն: Կոքա ցաւ չեն զգալ, երբ նոցա բուրդը կը խուզեն: Ոչ ընդհակառակն նոքա շատ կուրախանան, որ

տաք ամառուան օրերուն նոցա վրայէն կը հանեն այն հաստ բրդէ միւշտակը: Ոչխարը շահաւէտ կենդանին է: «Եա չի խածնիլ և չի յարձակուիլ մարդու վերաց, ինչպէս շունը: Խոչը շատ ուժեղ կը լինի: Երբ նա մէկ ուրիշ խոչի կը պատահէի, նոքա հետ կը կուռի: Մաքին գառնուկ կը ծնի: Գառնուկները գեղցիկ կենդանիներ են: Մանր տղոց պէս նոքա ուրախ ուրախ կը խայտան ասղիս անդին: Ես գառներ շատ կը սիրեմ:

63. ԳՐԱՆՆՈՒԿ.

Ակրոն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդդ Ճեկամակ ու փափուկ.
Դաշտ վաղելով ու արօտ
Ալ քաշես մօրդ կարօտ.
Մէ՛ լար, գառնուկ սիրական,
Փոքրիկ տղի գու նման,
Կուզոյ մայրդ, հետը շատ
Ալ բերէ բեղ անոյշ կաթ:

64. ՕԿԵՆ ՔԵՐԱՆ ԳԱՐԵՆՈՒԿ.

«Ինչո՞ւ կուլաս, գու գառնուկ,»
— Խիստ ծեծ կերայ ես, մայրիկ:
«Ո՞ւ ծեծեց բեղ, իմ գառնուկ,»
— Մէկ վատ պառաւ, իմ մայրիկ:
«Ինչո՞ւ ծեծեց բեղ, գառնուկ,»
— Օճոնի տակն էի, մայրիկ:
«Ինչո՞ւ ծեծեց բեղ, գառնուկ,»

— ՈՒԿ Ճիպոսով, իմ մայրիկ:
«Վրտեղիդ զարկեց, գառնուկ»;
— Ոտիկներուս, իմ մայրիկ:
«Հնչագէս լացիր, դու զառնուկ»;
— ՈՒԿ, մէ՛, մէ՛, մէ՛, իմ մայրիկ:

65. Ա Դ:

Առվը ձիի պէս գեղեցիկ չէ: Նորա մարմինը, վեղը և ոտքերը հաստ են, ճակատը լայն, աչքերը պղտոր, իսկ բերանը լայն: Նորա ճակատին վերայ երկու երկայն եղջեւը կայ, իսկ ոտքերը կը վերջանն կճակաւոր պժեղներով: Բայց կովը շատ օգտակար կենդանի է: Կամ մեզ համեղ կաթ կուտայ: Աաթէն կարագ կը հարեն ու պանիր կը կարեն: Կա կուտայ մեղ նաև միս, ճարու և կաշի: Աաշեն կօշիներ կը կարեն, ճարպէն մոմ ու սապրն կը շինեն: Առվը տարին մէկ անդամ կը ծնի: Կովա ձագին հորթ կամ մողի կասեն: Առվը եղջերաւոր կենդանի է: Ուրիշ ի՞նչ եղջերաւոր կենդանիներ զիտես: Առվը ու եղը կուտեն արօտ, յարդ և առուցտ: Եղբ կուտեն, կը կշտանան, կը պառկին և կ'որոճան: Կովա որոճող կենդանիներ են: Ուրիշ ի՞նչ որոճող կենդանիներ զիտես:

66. Հանելուկ.

Առվ է, կով չէ, Բայց հորթ չունի:
Աաթ կուտայ, Աայս ի՞նչ է:

67. Չ Լ:

Չին մէկ գեղեցիկ կենդանի է: Եղբ նա կառք կը քաշէ, վիզը կամարի պէս կը ծուէ: Կորա զլուխը երկայն է, վիզին վերայ ունի երկայն բաշ: Մարմինը բոլորակ է, գեղեցիկ և կարծ մազերով ծածկուած: Ոտքերը բարակ են: Կորա ամբակներուն պայտ կը գամեն, որ նա կարողանայ ամուր կանգնել: Չին մազի գոյնը կը լինի սւ, գորշ, կարմիր, դեղին կամ աշխատ և սպիտակ: Չին չի կրնալ արգեհօք ծիծաղել: Այս, նա կը ծիծաղի, կը եղենջայ, եղբ ծառան գարիին պարկը ձեռքը ախոռը կը մտնէ, եղբ նա գաշտը ուրախ ուրախ կ'արածէ, կամ եղբ նա իւր տիրոջ կը տեսնէ: Բայց եղբ նա իւր ոտքերով գետինը կը դոփէ: Կա իւր ոտքերով կը դոփէ, եղբ երկար ժամանակ մէկ բանի կը սպասէ: Չին կուտէ խոտ, առուցտ, յարդ, խար, վարսակ և գարի: Չին կամ կը հեծնեն և կամ կը լծեն:

68. Չ Լ Խ Ը.

ՄԿ ծանր բեռնաւորուած էշի շետ մէկ պարապ ձի կերթար: Եշը իւր ծանր բեռնին տակը կը հառաչէր: «Բու մշջքիդ վերայ առն ոչինչ չունիս: Կ'աղախմ քեզ, օդնիր ինձ և մէկ քիչ մը իմ բեռնէս առ:» Բայց ձին նախատեց նորան ասելով: «Կու սարսափելի ծոյլ ես: Ուրիշին ի՞նչ պարագն է քո բեռդ առնել տանելու:» Եշը կրկին անդամ աղաչեց: «Կամ քովս ալ ոյժ չի մնաց: Աթէ Կատաւածդ կը սիրեա, օգնէ ինձ, թէ չէ այս բոպեիս կ'ընկնիմ և հոգիս կուտամ»:

Բայց ձին դարձեալ չկասարեց նորա ինդիրը: Եշը ընկաւ և շունչը փչեց: Բաղրու բեռը այժմ ձին վրան դրին, որուն վրայ աւելցուցին էշի կաշին ալ:

69. Դ ա շ ա .

Մենք շատ անգամ դաշտ գնացել ենք զբունելու: Այնտեղ մենք աեսել ենք արտեր ու բանջարանոցներ: Արտերու մեջ կը բանեն զանազան արմաթիք, խակ բանջարանոցը ու մեջ գետնախնձոր, բողի, բակլայ, լոբիս, մաշ, սիսեռ և որիշ շատ կանաչեղին: Բայց այս ամէնը ինքն իրեն չի բանիլ, այլ գեղացիք կը ցանեն կամ կը տնկին: Սակայն նոցա ցանաձն ու անկածը չէր աճիլ ու չէր հասնիլ, եթէ բարերար Աստուած նոցա վրայ չը ցօղէր անձրեի կաթիկներ և չը զրիէր նոցա համար արեգակի լոյսը:

70. Ա բ ա .

Դաշտի մեջ գեղացիները կը ցանեն ըլրս տեսակ արմբտիք. ցորեն, գարի, վարակ ու կորեկ: Քանի որ նոքա կանաչ կը լինին, արօտի շատ կը նմանին: «Առքա ալ, ինչպէս և արօտը, ունին գատարկ ցողուն և նեղ ու երկայն տերեւներ: Առցա ցողունն ալ ծնկիր ունի: Բայց երբ նոքա բաւականին կը բարձրանան, նոցա ցողունի ծայրը կը բանին հասկիր, որոնց մեջ կը գտնուին արմաթիքը կամ սերմերը: Երբ արտը կը հասնի, կը հնձեն, հնձեածը կը կաղսեն, կ'աղան և կը շնեն ալիւր: Ուեր ընտանի կենդանիներն ալ իրենց սնունդը արտերէն կը ստանան: Առքա յարդ շատ կը սիրեն: Արտերու մեջ կը բնակին նաև մէկ քանի տեսակ թռչուններ ու կենդանիներ, ինչպէս և զորինակ. արտոյտը, լորը, կաքաւը և նապաստակը:

71. Շ ա ճ ղ ո ւ կ ը ո ւ ա յ ս պ է ն ո ւ շ է ր ը .

Ուեկ Ճնճղուկ արտի մեջ բուն դրել էր և ձագեր հանել: Ուեկ օր արտի տէրը կուզայ, արտին զլուխը կը կանգնի ու կասէ. «Արդէն հնձելու ժամանակն է, վաղը պիտի մարդիկ կանչեմ և գամ հնձեմ»: Երբոր Ճնճղուկը տուն դարձաւ, ձագերը ասացին. «Տէ, շուտ արա, արի այստեղին փախչենք երթանք. այսօր արտին տէրը եկաւ այսպէս ու այսպէս ասաց»: Ույրը պատասխանեց: «Ո՞ի վախնաք, քանի որ նա յօյսը ուրիշի վրայ դրել է, մենք այստեղ երկար կը կենանք»: Ո՞ի քանի օրէն արտին տէրը նորէն եկաւ և ասաց. «Չէ, չեղաւ: Արտիս ժամանակը անցնելու վրայ է, հասկերը ըրացել են և ցորենը կը թափի: Ույրը պիտի մարդիկ վարձեմ ու գամ հնձեմ»: Երբ մայրը տուն եկաւ, ձագերը պատմեցին, թէ այսօր ալ եկաւ արտի տէրը և այսպէս ու այսպէս ասաց»: Ո՞ի վախնաք, պատասխանեց մայրը, քանի որ նա յօյսը ուրիշի վրայ դրել է, մենք այստեղ երկար կը կենանք»: Ո՞ի քանի օրէն արտատէրը դարձեալ եկաւ և ասաց. «Չէ, այս անգամ ալ չեղաւ: Ադոր ճարն այն է, որ վաղը ես, իմ որդիս և իմ կինս, մարդագլուխ մէկ մէկ մանգաղ առած գանք ու հնձենք»: Երբ մայրը վերադարձաւ, ձագերը պատմեցին թէ այսօր ալ եկաւ արտատէրը և այսպէս ու այսպէս ասաց: Ույրը պատասխանեց: «Այժմ նորամէն վախնալու է, որովհետեւ նա իրեն բանը իր ձեռքով կուզէ կատարել»:

Այդ ժամանակը ձագերն արդէն մեծցել էին: Ուստի իսկցին թռան գնացին:

72. Ա ՞ է ՞ ա?

Արիան բանջարանոցի մէջ կը բանի: Կորա հատիկները կը գտնուին մէկ երկայն ու կանաչ պատեանի մէջ: Պատեանը նոցա անակն է: Այնտեղ նոցա համար ապահով է ու տաք: Կա նոցա կը պաշտպանէ արձրեէն և պատող արմէն: Պատեանը խմ երկու մասին չափ երկայն է և ունի մէկ մասի չափ լայնութիւն: Երկու կորմէն նա մէկ մէկ կարան ունի, առջեւէն՝ մէկ սուր պառկ, եաւէն՝ մէկ կարճ կոթ: Կայ ցեցի ըրիս և թուփի լրիս: Ցեցինը և սայտախարիւ կը լինի, թուփինը՝ սպիտակ: Լոբիային հատիկը ունի կեղև և միջուկ:

73. Ա ՞ ա ՞ ա ՞ ա.

Վնագէս գեղեցիկ է անտառը: Որչափ անտառին խորքերը երթաս մտնես, այնչափ ալ աւելի խոր լուռթիւն կը տիրէ չօրս դիդ, բայց այնքան ալ աւելի կը պանչանաս: Այնտեղ գու կը տեսնիս բարձր բարձր ծառեր, զոր օրինակ, կաղնի, հացի, բարզի, ըրի, թեղի, թեզոշի, ծապկի: Օառերուն մէջէն կերենայ կապցա երկինքը: Ճիւղերուն վերսց կը ճռուողին թռչուններ: Բայց անտառի մէջ կան նաև թուփիր: Օառերուն տակը, խիտ թուփերուն մէջ կը բնակին շատ կենդանիներ, նաև պատասակ, աղուէս, այծեամ ու եղջերու: Անտառի մէջ կը բնակեն նաև գիշատիչ զաղաներ, բնագէս են դայլը և արջը:

74. Ա ՞ դ ՞ ն.

Կայ երկու տեսակ կաղին: Խողակաղին և արքայակաղին: Խողակաղինը խողերը կուտեն, արքայակաղինը՝ մենք:

Արքայակաղինը բոլորակ կը լինի և նատած մէկ կանաչ ատամիաւոր մատնոցի մէջ: Կորա փեճեկը նախ սպիտակ կը լինի. բայց երբ կը հանի, կը դառնայ գորշ: Փեճեկի մէջ կը գտնուի միջուկը: Ես շատ կը սիրեմ միջուկը. նա համով կը լինի: Կաղինի մէջ երբեմն կը լինի նաև որդ, որ կուտէ միջուկը: Կա կը բուսնի թուփերու վրայ: Տղաքը կերթան անտառ, կաղին կը փետեն և կը բերեն իրենց մօրը:

75. Գ ՞ յ լ.

Գայլը մէկ մեծ շունի չափ է և նորա պէս ալ ուժեղ է: Կա շատ ծակաչը է. ինչքան ալ ուտէ, չե կշանալ: Երբ նա բաղցած է, կը յարձակուի այն կենդանին վերայ, որին նա կը կրնայ յաղթել: Գայլը գիշատիչ գաղան է: Վմառը նա միայնակ որսի կերթայ, խակ աշնան և ձմեռը վոհմակներով: Գայլը երբեմն ոչխարներ ալ կը յափշտակէ հօտերէն ու կը լսափէ: Այդ պատճառով հովիւները իրենց մօտ գամփնեներ կը պահէն: Գայլը կը յարձակուի մինչեւ անգամ ձիներու, կովերու, եղներու ու եղջերուներու վրայ: Բայց սոքա կը պաշտպանուին իրենց ամբակներով ու եղջիւներով: Գայլը մարդէ կը վախնայ: Բայց երբ շատ բաղցած լինի, նա չե վախնալ մինչեւ անգամ որսորդներէն:

76. Արախու Հ ՞ մ է ը.

Հովիւնին մէկը սովորութիւն արել էր իւր ընկերներուն խաբելու: Շատ անգամ նա աշազին ձայնով կը կանչը: «Գայլ եկաւ, գայլ եկաւ»: Բայց երբ միւս

Հովհանները կը վագէին օդնութեան կուդային, նա կը ծաղ-
րէր և կը ինսդար նոյն վերաց:

Մէկ օր աւ իսկապէս մէկ գայլ յարձակուեցաւ նորա
հօտին վերաց: «Աս սկսու առաջուան պէս աղաղակել.
«Գայլ եկաւ, գայլ եկաւ»: Ընկերները կարծելով որ
նորա սյդ վարմունքը նոր խարէութիւն է, տեղերէն չշր-
մեցան: Գայլը յարձակուեցաւ նորա հօտին վրաց և յօ-
շուեց ոչխարնելը:

Եռածն կասէ՝ «Սուտ խօսողի տունը ընկաւ կրտկ,
բայց ոչ ոք ընծայեց հաւատք»:

77. Ա ս յ լ.

Սայլը ունի երկու անիւ, մէկ սեռն, մէկ աւարք և
երկու կող: Սեռնի խրաքանչեւր ծայրը մէկ անիւ կայ:
Ենիւր ունի մէկ գունդ, շատ սոլեր և մէկ ջջապատ: Ե-
ւարքը ունի երկու թե, երկու կոփ, մէկ զիսամեր և մէկ
դիմէար: Եւարքի թեւերը սայլի առջեր կը միանան և սուր
անկիւն կը կազմեն: Գիշամէրին կը լծեն եղերը: Խնչու
համար է դիմէարը: Խրաքանչեւր թե ունի երկու ատամ:
Եյս ատամներու մէջ կը պատի անիւներու սեռը: Կոփերի
վերաց կը գտնուին սայլի կրղմը: Ոսյլի կողերը կունենան
չորս ցից, երկու երկայն ձող կամ թառ և շատ ճաղեր:

78. Հանելուկ.

Չորս եղբայր կան,

Մէկզմէկու ետևէ միշտ կը վազին,

Բայց մէկ մէկու նոքա երբէք չեն հասնիր:

Եյս ի՞նչ է:



Հ | Արմ.
3-50

0

2018 3348

«Ազգային գրադարան»



NL0061249

